


1.2 Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2000թ. հունվար-հունիսին հանրապետությունում, ըստ 1215 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), փաստացի գներով, թողարկվել է 138465.6 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 139544.6 մլն դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 8031.8 մլն դրամի, այլ երկրներում՝ 19236.4 մլն դրամի արտադրանք:

1999թ. հունվար-հունիսի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 102.9 տոկոս, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էներգետիկայի՝ 107.4 տոկոս:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան
տոկոսներով 1998թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի դինամիկան

(տոկոսներով)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
1999 թ.			
հունվար	91.3	105.1	91.3
փետրվար	89.7	85.4	81.9
մարտ	126.2	97.9	103.4
ապրիլ	86.6	106.0	89.5
մայիս	98.3	108.3	88.0
հունիս	131.3	118.4	115.5
հուլիս	88.9	123.1	102.7
օգոստոս	108.6	122.7	111.5
սեպտեմբեր	90.1	106.9	100.5
հոկտեմբեր	97.3	106.5	97.8

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
նույնը	98.8	100.7	96.6
դեկտեմբեր	112.8	91.4	109.0
2000 թ.			
հունվար	80.7	94.3	80.7
փետրվար	111.1	108.0	89.7
մարտ	105.5	99.4	94.6
ապրիլ	89.0	95.4	84.2
մայիս	111.3	119.8	93.7
հունիս	103.9	102.0	97.4



Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը, ըստ գործունեության հիմնական տեսակների¹

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, փաստացի գներով ² , մլն դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով ² , մլն դրամ	2000թ. հունվար-հունիսին արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը տոկոսով 1999թ. հունվար – հունիսի նկատմամբ (համադրելի գներով)
Ամբողջ արդյունաբերությունը	138465.6	139544.6	102.9
<i>այդ թվում՝</i>			
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	47240.4	47240.4	94.8
Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	6764.3	6565.3	116.1
Վերամշակող արդյունաբերություն	84460.9	85738.9	106.8
<i>որից՝</i>			
սննդամթերքների արտադրություն	47959.2	49523.1	104.0
ծխախոտի արտադրություն	6890.0	6576.2	189.5
տեքստիլ և կարի արտադրություն	1455.3	1394.7	54.0
փայտանյութի և փայտե իրերի արտադրություն	294.4	254.1	229.0
քիմիական արդյունաբերություն	4122.2	2968.7	116.1
ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն	2843.7	2796.7	62.2
մետալուրգիական արդյունաբերություն	6931.7	7655.7	216.1
մետաղամշակման արդյունաբերություն	960.2	999.0	80.9
մեքենաների և սարքավորումների արտադրություն	1638.6	1662.1	133.9
թանկարժեք իրերի արտադրություն	7909.5	7930.4	92.9



¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ գործունեության հիմնական տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և սկզբիցային հարկերի:


Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն, ըստ արտադրության սեկտորների 2000թ. հունվար - հունիսին



Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում




Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում



■ մետաղային հանքաքարի արդյունահանում
■ լեռնահանքային արդյունաբերության և բաց հանքերի շահագործման այլ բնագավառներ


Վերամշակող արդյունաբերություն



■ 1-սննդամթերքների արտադրություն
■ 2-ծխախոտի ապրանքների արտադրություն
■ 3-տեքստիլ և կարի արտադրություն
■ 4-քիմիական արդյունաբերություն
■ 5-ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն
■ 6-մետալուրգիական արդյունաբերություն
■ 7-մետաղամշակման արդյունաբերություն
■ 8-մեքենաների և սարքավորումների արտադրություն
■ 9-թանկարժեք իրերի արտադրություն
■ 10-գործունեության այլ տեսակներ

2000թ. հունվար-հունիսին իրացված արտադրանքը կազմել է թողարկված արտադրանքի ծավալի 100.8 տոկոսը: Նշված ժամանակաշրջանում իրացված և թողարկված արտադրանքի ծավալների հարաբերակցությունը, ըստ գործունեության հիմնական տեսակների, բնութագրվում է հետևյալով.

Իրացված արտադրանքը տոկոսներով թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ



- 1 - էլեկտրաէներգիա, գազ, ջրամատակարարում
- 2 - Լեռնահանքային արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում
- 3 - Վերամշակող արդյունաբերություն, որից՝
- 4 - սննդամթերքների արտադրություն
- 5 - ծխախոտի ապրանքների արտադրություն
- 6 - տեքստիլ և կարի արտադրություն
- 7 - փայտանյութի և փայտե իրերի արտադրություն
- 8 - քիմիական արդյունաբերություն
- 9 - ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն
- 10 - մետալուրգիական արդյունաբերություն
- 11 - մետաղամշակման արդյունաբերություն
- 12 - մեքենաների և սարքավորումների արտադրություն
- 13 - թանկարժեք իրերի արտադրություն

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը ըստ մարզերի և ք. Երևանի,
2000թ. հունվար-հունիսին**

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, փաստա- ցի գներով, մլն դրամ	Պատրաստի ար- տադրանքի իրա- ցումը, փաստացի գներով, մլն դրամ	2000 թ. հունվար-հունիսին արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը տոկոսով 1999թ. հունվար - մարտի նկատմամբ (համադրելի գներով)
Հանրապետությունը, ընդամենը	138465.6	139544.6	102.9
<i>այդ թվում՝</i>			
ք. Երևան ³	58296.1	58985.7	108.0
Արագածոտնի մարզ	1660.1	1651.6	91.6
Արարատի մարզ	5842.5	6464.1	106.6
Արմավիրի մարզ	15392.3	15594.2	109.3
Գեղարքունիքի մարզ	3283.3	3442.9	109.9
Լոռու մարզ	6638.6	6506.8	101.6
Կոտայքի մարզ	20779.7	20462.8	93.1
Շիրակի մարզ	4065.4	4070.2	95.5
Սյունիքի մարզ	8473.1	8317.2	110.0
Վայոց Ձորի մարզ	1108.7	1119.3	133.9
Տավուշի մարզ	1307.0	1311.0	95.2


Ինչպես երևում է վերը բերված տվյալներից, 2000թ. հունվար - հունիսին նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ Երևան քաղաքի, ինչպես նաև հանրապետության մարզերի մեծ մասի արդյունաբերական կազմակերպություններում արձանագրվել է արդյունաբերական արտադրության աճ: Այսպես, Երևան քաղաքում այն կազմել է 8.0%՝ հիմնականում ի հաշիվ ծխախոտի ապրանքների արտադրության (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ աճի տեմպը կազմել է 189.3%), պոլիգրաֆիական արդյունաբերության (164.3%), մետալուրգիական արդյունաբերության (150.5%), քիմիական արդյունաբերության (117.6%):

Վայոց Ձորի մարզում արտադրության աճը կազմել է 33.9%՝ հիմնականում ի հաշիվ սննդամթերքների և ընպելիքների արտադրության (134.1%), Սյունիքի՝ 10.0%, գրեթե ամբողջությամբ ի հաշիվ լեռնահանքային արդյունաբերության (117.9%), Գեղարքունիքի՝ 9.9%, տեքստիլ ապրանքների (2.8 անգամ), ռադիոյի, հեռուստատեսության և կապի սարքերի ու սարքավորումների (153.2%) ու սննդամթերքների և ընպելիքների (107.6%) արտադրությունների, Արմավիրի՝ 9.3%, գրեթե ամբողջությամբ էլեկտրաէներգիայի արտադրության (114.4%), Արարատի՝ 6.6%՝ հիմնականում սննդամթերքների և ընպելիքների արտադրության (135.5%), ինչպես նաև թղթի և նրանից պատրաստվող իրերի արտադրության (2.5 անգամ) և Լոռու մարզում 1.6%՝ գրեթե ամբողջությամբ մետալուրգիական արդյունաբերության հաշվին (6.8 անգամ):

Հարկ է նշել, որ Երևան քաղաքի արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկված արտադրանքի տեսակարար կշիռն արդյունաբերության ընդհանուր ծավալում կազմել է 46.0%: Մեծ են նաև Կոտայքի և Արմավիրի մարզերում թողարկված արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռները: 2000թ. հունվար-հունիսին դրանք կազմել են համապատասխանաբար՝ 16.4 և 12.1 տոկոս:

³ ք. Երևանի և հանրապետության մարզերի կազմակերպությունների կողմից թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալներում ընդգրկված չէ էլեկտրաէներգիա (քերմային էներգիա) բաշխող ցանցերի արտադրանքը: Հաշվետու ժամանակաշրջանում այն կազմել է 11618.8 մլն դրամ:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն 2000թ. հունվար-հունիսին, ըստ երևան քաղաքի և հանրապետության մարզերի



2000թ. հունվար-հունիսին արտադրված (հաշվառվող) 102 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 50-ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 50-ից 26-ի և սպառողական ապրանքների՝ 52-ից 24-ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները

(համադրելի բացթողնման գներով, մլն դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-հունիսին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, տոկոսով
	2000 թ.	1999 թ.	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	69962.7	60374.2	115.9
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	43213.3	42387.4	101.9
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	8279.8	4224.6	196.0
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	18469.6	13762.2	134.2
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության	3149.4	5840.2	53.9
նշակութակենցադային և տնտեսական նշանակության	15320.2	7922.0	193.4

Ընդհանուր առմամբ, 2000թ. հունվար-հունիսին հանրապետությունում թողարկվել է 3183.5 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 1999թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 99.2 տոկոսը: Ընդ որում, ՀԱԷԿ -ում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 13.7 տոկոսով, իսկ ՀԷԿ-երում և ՋԷԿ-երում նվազել է համապատասխանաբար՝ 6.7 և 12.6 տոկոսով:

2000թ. հունվար-հունիսին ՀԱԷԿ-ը թողարկել է 1478.0մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 46.4 տոկոսը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար՝ 1148.9 մլն կվտ ժամ և 36.1 տոկոսը, ՀԷԿ-երը՝ 556.6 մլն կվտ ժամ և 17.5 տոկոսը:

2000թ. հունվար-հունիսին հանրապետությունում թողարկվել է 387.8 հազ. Հկալ ջերմային էներգիա, որը կազմել է 1999թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 105.9 տոկոսը:

2000թ. հունվար-հունիսին սննդի արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը ⁴

	2000 թ. հունվար-հունիս	1999 թ. հունվար-հունիս	2000 թ. հունվար- հունիսը տոկոսով 1999 թ. հունվար-հունիսի նկատմամբ
Ձկան որս, տոննա	162.7	272.3	59.8
Միս ⁵ , տոննա	12126	12744	95.2
Երշիկեղեն, տոննա	230.1	238.1	96.6
Պանիր, տոննա	1868	1895	98.6
Պաղպաղակ, տոննա	507.2	319.7	158.6
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ⁵ , հազ. տոննա	141.6	132.7	106.7
Պահածո, հազ. պայմ. բանկա	2186.1	1799.7	121.5
Ալյուր, հազ. տոննա	78.4	62.6	125.2
Ձավարեղեն, տոննա	24.8	170.4	14.6
Հաց և հացամթերք, հազ. տոննա	175.8	177.2	99.2
Հրուշակեղեն, տոննա	921	332	2.8անգամ
Մակարոնեղեն, տոննա	568	416	136.5
Օղի, հազ. լիտր	4889	2290	2.1անգամ
Կոնյակ, հազ. լիտր	791.0	358.7	2.2անգամ
Խաղողի գինի, հազ. լիտր	1126	1030	109.3
Շամպայն գինի, հազ. շիշ	266.7	381.4	69.9
Գարեջուր, հազ. լիտր	3366	3343	100.7
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ հազ. լիտր	6705	11137	60.2
Հանքային ջրեր, հազ. 0,5 և շիշ	13354	7465	178.9
Աղ, տոննա	12521	11051	113.3
Սիգարետներ, մլն.հատ	1264	1314	96.2

2000թ. հունվար-հունիսին բնթև արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2000 թ. հունվար-հունիս	1999 թ. հունվար-հունիս	2000 թ. հունվար- հունիսը տոկոսով 1999 թ. հունվար-հունիսի նկատմամբ
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	84.4	91.5	92.2
Բրդյա գործվածքներ, հազ. մ ²	2.0	5.4	37.0
Մետաքսյա գործվածքներ, հազ. մ ²	5.0	20.0	25.0
Գորգեր և գորգեղեն, հազ. մ ²	8.5	10.4	81.7
Գուլպեղեն, հազ. զույգ	417.4	120.7	3.5անգամ
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	1104.7	837.1	132.0
Բամբակյա մանվածքաթելեր, տոննա	36.7	19.0	193.2
Բրդյա մանվածքաթելեր, տոննա	2.1	12.8	16.4
Կարի արտադրանք, մլն. դրամ	2432.8	5218.3	46.6

⁴ Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունն առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1210-202):

⁵ Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):

2000թ. հունվար-հունիսին **քիմիական** արդյունաբերության ճյուղի հիմնական արտադրատեսակներից սինթետիկ կաուչուկի արտադրությունը 1999թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 80.5%-ով, լաքաներկանյութերինը՝ 82.3%-ով, իսկ քիմիկա-դեղագործական արտադրանքի, կաուստիկ սոդայի և պլաստմասսայից իրերի արտադրության ծավալները նվազել են, համապատասխանաբար՝ 7.8, 12.5 և 49.7 տոկոսով:

2000թ. հունվար-հունիսին շինանյութերի արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2000 թ. հունվար-հունիս	1999 թ. հունվար-հունիս	2000 թ. հունվար- հունիսը տոկոսով 1999թ. հունվար-հունիսի նկատմամբ
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	7664	22708	33.8
Ապրանքային բետոն, մ ³	2023	8355	24.2
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	17143	17914	95.7
Ոչ հանքային շինանյութեր, հազ. մ ³	24.2	77.3	31.3
Կիր, տոննա	1623	1924	84.4
Գաջ, տոննա	5240	5022	104.3
Ցեմենտ, հազ. տոննա	89.1	152.4	58.5
Կանոնավոր կտրվածքի տուֆ, մ ³	19277	26632	72.4
Ծակոտկեն լցանյութեր, հազ. մ ³	34.0	53.1	64.1
Կլինկեր, հազ. տոննա	135.9	140.5	96.7
Այլումինե համաձուլվածքներից կառուցվածքներ և իրեր, տոննա	6.1	14.6	41.8

Մետալուրգիական արդյունաբերության ճյուղի կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սև պղնձի արտադրությունն ավելացել է 6.3 անգամ, պողպատե ձուլվածքինը՝ 2.6 անգամ, այլումինե գլանվածքինը՝ 28.9%-ով և պղնձինը՝ պղնձե խտանյութում՝ 12.5%-ով:

2000թ. հունվար – հունիսին մեքենաշինության ճյուղի կազմակերպությունների կողմից հիմնական արտադրատեսակների թողարկումը

	2000 թ. հունվար-հունիս	1999 թ. հունվար-հունիս	2000 թ. հունվար- հունիսը տոկոսով 1999 թ. հունվար-հունիսի նկատմամբ
Մետաղահատ հաստոցներ, հատ	69	88	78.4
Ռելեներ, հազ. հատ	52.2	18.6	2.8անգամ
Ուժային ճկուն կաբելներ, կմ	5.9	18.4	32.1
Ուժային կաբելներ մինչև 1կՎ լարման համար, կմ	902	99	9.1անգամ
Շարժական էլեկտրակայաններ, հատ	18	-	-
Ուժային տրանսֆորմատորներ, հատ	8	-	-
Ավտոմեքենաներ, հատ	5	3	166.7
Տեղակայման հաղորդալարեր, կմ	1866	1140	163.7
Ճնշակներ, հատ	-	65	-
Կենտրոնախույս պոմպեր, հատ	1055	27	39.1անգամ
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	821	127	6.5անգամ